

«Ճաշակեց՞ք Եւ տեսէ՞ք թէ Տերը քաղցր է.  
Երանի այն մարդուն որ կը յուսայ Անոր»:  
(Սաղմոս 34:9)

## Պատարագը անձի հոգեւոր Եւ բարոյական արժեք

Հայ փիլիսոփայական տեսական միտքը, շարուևակելով անտիկ ժամանակաշրջանի գիտութիւնների համակարգումը, բարոյականութիւնը դիտել է որպես զործեական փիլիսոփայութիւն, որը սովորեցնում է մարդուն ապրել ճիշդ՝ համաձայն իր եռթեան: Փիլիսոփաները աստուածաբանները յատուկ տեղ են յատկացրել բարոյագիտական հարցերին, ընտել են առարիսութիւնների, բարոյական բնոյի Եւ աղբիրների, չարի Եւ բարու, կամքի ազատութեան, հոգեւոր Եւ բարոյական կատարելազործման, կեանքի Եւ մահուան, բարձրագոյն բարիքի, հայրենասիրութեան, ժողովրդի Եւ մարդու ազատութեան Եւ այլ հարցերի: Այդ հարցերի այս կամ այն ըմբռնումը կանխորշել է իրաքանչիւր մտածողի բարոյագիտական հայեացընների բովանդակութիւնը, աշխարհայեացքի ուղղուածութիւնը: Չարի Եւ բարու յարաբերակցութեան հարցում, ի տարբերութիւն զրադաշտականութեան, դուալիզմի Եւ ճակատազրապաշտութեան, տիրապետել է բարու սուբստանցիայի Եւ չարի ոչ սուբստանցիայի եռթեան ըմբռնումը, որը բրիստոնէական բովանդակութեամբ հանդերձ ծառայել է ազգային ազատազրական պայքարի գաղափարական հիմնաւորումը (Մերոպ Սաշտոց, Եզիկ Կողբացի, Եղիշէ, Փաւառու Բուզանդ Եւ այլօր):

Անտիկ փիլիսոփայութեան յատուկ բարոյական ուղղուածութիւնը նկատելի է նաև հայ միջնադարեան փիլիսոփայութեան մէջ: Փիլիսոփայութեան հիմնական նպատակն է հոչակուել իմացական Եւ բարոյական կատարելազործման, առարիսութիւնների դաստիարակման միջոցով Աստծուն մերձենալը, որը հումանիզմի դրսեւրման իրայատուկ ձեւ էր Դաւիթ Անյառի, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տաթեւացու Եւ այլոց մօս: Առարիսութիւնների բրիստոնէական ըմբռնմանը զուգահեռ գոյատել են նաև անտիկ տեսութիւնները, որոնք պայմանաւորել են այդ խնդրի առաւելապես աշխարհիկ վերլուծութիւնը (Յովհաննես Երգիլացի Պլուտ, Միմիքար Գոշ): Մովսէս Խորենացու, Եղիշէի մօս բարոյական աշխարհայեացքի ընկալումը դրսեւրուել է յատկապես՝ հայրենասիրութեան, ժողովուրդների ազատութեան Եւ հաւասարութեան հարցերում:

17-րդ դարում նկատում է բարոյական խնդիրները կրօնից անջատելու, դրանց բանականացման որոշակի միտում, յատկապես՝ Մատթեոս Եւ Ղուկաս Վանանդեցինների Եւ այլոց: 18-րդ դարի վերջին, յանձին լուսաւորական շարժման, յատկապես՝ զիտատեխնիկական յեղափոխութեան ազդեցութեան ներքո բարոյագիտական շատ հարցեր ստանում են սոցիալական ուղղուածութիւն՝ ընդգծում են ժողովուրդների բաղաքական ազատութեան, մարդու ազատութեան Եւ անկախութեան Եւ այլ զաղափարներ, յատկապես՝ Հ. Էմին, Շ. Շամիրեան, Ս. Բաղրամեան Եւ այլոց զաղափարական հայեացըներում: Հետազայն, յատկապես 19-րդ դարի 40-ական թուականների վերջում, երբ ձեւաւորուեց Մարքսիստական տեսութիւնը, ապա դրա հետեւանքով բարոյագիտական հարցերի ընսարկումը ընթանում է կրօնական Եւ հակակրօնական ուղղութիւնների բուն պայքարում, բարոյականութեան շահերի զուգակցման ու այլ խնդիրների:

Անշուշտ, Մարքսիստական բարոյականութիւնը մի նոր աստիճանի է բարձրացնում բարոյականութեան մէջ մատերիալիզմի Եւ հումանիզմի աւանդոյթները: Նշենք, որ մարդը միանգամից կտրում է կրօնական բարոյականութիւնից Եւ կորցնում այս հիմնական կրօնական բարոյականութեան հոգեւոր արժեքները, որոնք մարդուն հաղորդակից են դարձնում աստուածային կատարելութեանը:

Ակնյայտ է, որ Մարքսիստական տեսութիւնը չէր ժխտում բարոյականութեան դերը և նրա ջատագովները ընդգծում էին, որ բարոյականութիւնը իր եւթեամբ ծառայում է մարդկային հասարակութեանը վեր բարձրացնելու, այսինքն՝ բարոյականութիւնը պէտք է հիմնական գործոնը հանդիսանայ յեղափոխութեան համար: Այն յեղափոխութեան, որը մարդկութեանը պէտք է ազատագրի մարդու կողմից մարդու շահագործումից: Սոցիալզմի ժամանակ ձեւարուած բարոյականութիւնը անհատին հեռացնում է կրօնական բարոյականութիւնից և Աստծո նկատմամբ ունեցած հաւատից: Այստեղ բարոյականութիւնը ծառայում է որպէս հասարակականօրէն օգտաւէտ գործունեութիւն կատարելու համար:

Սակայն մարդկային մտքի պատմութիւնը մի անվերջ շղթայ է, որի ամէն մի օդակ սերտօրէն միահիւսուած է միասի հետ: Մարդկային արդարացի պայյարարի հետեւանքով մարդը իր ճանապարհն է հարթում դեպի աստուածային կատարելութեանը հասնելուն: Անտարակյուն, ինչպէս արդէն նշուեց, որ մարդկային մտքի պատմութեան անվերջանալի օդակներից ամենաեւականներից էլ Պատարազն ու պատարազամատուցումն են հանդիսանում, որոնք բարոյագիտութեան կատեգորիաներից ամենահարուստն են և բազմակողմանիօրէն հիմնաւորուածք:

Պատարազի եւ պատարազամատուցումի եւթիւնը աւելի խորը ըմբռնելու համար ուշադրութիւն դարձնենք ժամանակակից գրականութեան մէջ տեղ զուած մի շարք մէկնարանութիւնների վրայ: Այդ կարգի վերլուծութիւն է իր մէջ պարունակում Թորգոն Արք. Սանուկեանի «Կոմիտասի հանձարը իր պատարազին մէջ» եւ Սամուել Ծ. Վրդ. Աղոյեանի «Սուրբ Հաղորդութեան խորհուրդը» աշխատանքները:

Սուրբ Պատարազը, ինչպէս վկայակոչում է Սամուել Ծ. Վրդ. Աղոյեանը, - « ի յայտ է զայիս երբեմն տարբեր անուններով ըստ պարազային եւ իմաստին»:

1. Eucharist (Գոհաբանութիւն). Ցունարէն բառ, որ կը բացատրէ խորհուրդին պարազան:
2. Lord's Supper (Վերջին Ընթրիք). Առիթը, որուն ընթացքին Քրիստոս հաստատեց պատարազի խորհուրդը:
3. Communion (Հաղորդութիւն). Զայն ստացողին հաղորդակցութիւնը մեր Տէր Յիսուս Քրիստոսի հետ:
4. Sacrifice (Զոհ). Քրիստոսի խաչելութիւնը եւ մահը խաչի վրայ որպէս «զոհ»:
5. Badarak (Պատարազ). Հայերէն բառ, որ կը նշանակէ «զոհ» (Sacrifice):
6. Liturgy (Արարողութիւն). Գոհաբանութեան (Eucharist-ի) արարողութիւնը Արեւելեան ուղղափառ եկեղեցոյ մէջ:
7. Mass (Ընծայում կամ Սատուցում). Գոհաբանութեան մատուցում հռոմեական կաթոլիկ եկեղեցոյ մէջ:
8. Blessed Sacrament (Սուրբ Խորհուրդ) կամ The Sacrament (Խորհուրդ). Սրբագործուն նշանական կաթոլիկ եկեղեցոյ մէջ: <sup>1</sup> Սովորաբար, Ս. Հաղորդութիւն (Holy Communion) եւ Ս. Պատարազ (Holy Sacrifice) բառերը գործածական են հայ եկեղեցոյ մէջ՝ ակնարկելու համար Divine Liturgy-ին:

«Ս. Հաղորդութիւնը խորհուրդ է», - գրում է Սամուել Ծ. Վրդ. Աղոյեանը, որ,- «Ս. Հաղորդութիւնը հայ եկեղեցոյ եօթ խորհուրդներէն մէկն է»: Խորհուրդ է, քանի որ Քրիստոս հաստատեց զայն: «Խորհուրդը ճշմարտութիւն մըն է, որ մարդկային միտքը անկարող է ըմբռնել, որ պէտք է ընդունիլ հաւատքով»: Այսուհետեւ գրում է,- «Խորհուրդները հասկանալու

<sup>1</sup> Սամուել Ծ. Վրդ. Աղոյեան «Սուրբ Հաղորդութեան խորհուրդը» Պեյսայտ, Նիւ-Ծոր, 1998:

համար պէտք է կարողանար մտապատկերել որոշ բաներ»: Այսինքն՝ «Խորհուրդի արարողական մասը» տեսանելի բաժինն է անտեսանելի շնորհին: «Շնորհը» գօրութեան գերբնական պարզեց մըն է կամ օգնութիւն մը, որ Աստուած կու տայ մեզի որպէս արդիւր իր բարութեան և ողորմութեան, որպէսզի օգնէ մեզ փրկութեան հետապնդումին մէջ»<sup>2</sup>:

Պատարագով պահուում է Քրիստոսի յիշատակը, ըստ իր յանձնարարութեամբ, երբ ասում է, «Ըրէք զայն իմ յիշատակին համար» (Ղուկաս 22:19):

Անտարակոյս, Քրիստոսի յիշատակին մատուցուած Պատարագը մարդկութեան կողմից ունի մեծ բարոյա-հոգեբանական նշանակութիւն, ըստ իս, դա է մարդկանց միակ ճշմարիտ ուղին:

Ս. Պատարագը իր մէջ բովանդակում է հետեւեալ խորհուրդը, այսինքն՝ Քրիստոսի երկինք համբառնալուց յետոյ, առարեալները պատարագի խորհուրդը կատարում էին Կիրակի օրերը (Գործ 10:9), շատ աւելի պարզ եւ կարծ արարողութեամբ, քան ինչ որ այսօր կատարում են:

Այսօր, հայ եկեղեցու ժամանակակից Պատարագի արարողութիւնը ձեւաւրուած է տարբեր պարագաներ օգուագործելով: Դրանք են՝ Կապադովկիայի Ս. Բարտէղ (4-րդ դար), Ս. Գրիգոր Նազիանզացիի (4-րդ դար), Կոստանդնուպոլսի Ս. Յովհաննես Ուկեբերանի (4-րդ դար), եւ հոումեական կաթողիկ եկեղեցու (12-րդ դար) պատարագները:

Ինչպէս յայտնի է կրօնական ուսումնասիրութիւններից, հայ եկեղեցու Պատարագը կարելի է բաժանել չորս մասերի՝ պատրաստութիւն, ճաշի ժամ, կանոն Ս. Պատարագի եւ արձակում:

Նկատենք, որ բոլորից ուշագրաւ եւ միեւնոյն ժամանակ բարոյա-հոգեբանական մեծ նշանակութիւն ունի, յատկապէս «Կանոն սուրբ Պատարագի» մասը, որտեղ կենտրոնական մաս է կազմում Պատարագի ընթացքը: Այսինքն՝ հաւատը միացած, հաւատացեալ անդամները ողջագործում են իրար հետ «սուրբ համբոյրով» (ողջոյն տալով), բաժանելով իրենց սերը որպէս եղբայրներ եւ քոյրեր, քանի որ Քրիստոս յայտնուած է իրենց մէջ (Թեսաղոնիկեցոց 5:26): Պատարագի ընթացքում է, որ հացն ու զինին սրբազրծում են՝ փոխակերպութելով դառնում են Քրիստոսի ճշմարիտ մարմինը եւ արիւնը, ունենալով գօրութիւնը ներելու մարդկանց մեղքերը, եւ պարզեւելու յախտեական կեանք: Քրիստոս ասաց. «Ով որ ուսում է իմ մարմինը եւ ըմպում է իմ մէջ եւ ես նրա մէջ» (Յովհաննես 6:57):

Պատարագը անցեալի եւ ներկայի ողջ բարոյական եւ հոգեւոր մշակոյթի գարզացման այնպիսի արդինք է, որ իր մէջ ներառել է ողջ մարդկութեան դրականը եւ հանդիսացել պատութեան ամենայեղափոխական՝ մարդկային արդարացի պայքարի հետեւաբռով մարդկութիւնը մաքանելով, քրիստոնեայ առարեալներով դարձել մարդկային փորձի ընդհանրացման արդինքի հիմքը:

Պատարագը դա մի նույն է, մի ընծայ է, մի զնի, որը հանդիսանում է քրիստոնեութեան զիսաւոր արարողութիւնը:

Պատարագի հետեւակրով, մարդու հոգին մաքրութելով, մարդուն մօտեցնում է Աստծոյ եւթեան սահմաննեն:

Պատարագի եւթիւնը յանուն մարդկութեան մեղքերի բաւութեան Յոհոնս Քրիստոսի խաչելութեամբ զոհաբերելու՝ պատարագութելու խորհուրդն է, որն ընթանում է կրօնական բնագրերի ընթերցումներով, արտասանութեամբ, աղօթքներով, երգեցողութեամբ, երաժշուութեամբ, ինկարկումով եւ ծիսակատարութեամբ, ևաեւ այլ արարողութիւններով:

Պատարագի ժամանակ հաւատացեալները եւ ընդհանրապէս եւ բոլոր մարդիկ պէտք է ճաշակեն Քրիստոսի մարմինն ու արիւնը խորհրդանշող հացը (Նշխար) եւ իհարկէ զինին: Ըստ աւանդութեան Պատարագի առաջին կազմողը եղել է Յակոբոս Տեառնեղբայր առարեալը,

<sup>2</sup> Տես նոյն տեղը:

այսինքն՝ Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը: Հայերը առաջին անգամ մ.թ. 1-ին դարից պատարաց են մատուցել<sup>3</sup>:

Յիշատակենք, որ հայ եկեղեցին Պատարաց ու պատարագամատուցում է կատարել ամէն Կիրակի: Պատարաց է կատարում ժողովուրդի կեանքում պատմական կարեւոր իրադարձութիւնների, նշանաւոր անձանց պատուին: Ակնառու է այն փաստը, հայոց առաջին Պատարագամատույցը Կեսարիայից բերել է Ս. Գրիգոր Լուսաւորիչը եւ այդպէս Պատարագը մարմնաւորուել է հայ եկեղեցու հոգեւոր կամարների տակ ու մեր ազգի համար դարձել ազգային ինքնազիտակցութիւն, եւ միեւնոյն ժամանակ հանդէս է եկել որպէս ազգի բարոյական ամենաբարձր հոգեւոր արժեքը:

Ժամանակի ընթացքում Պատարագը հարստացել ու հարստանում է իր եռթեամբ, նոր երգերով ու երաժշտութեամբ: Օրինակ՝ անշափ յատկանշական է Ներսէս Շնորհալու ներդրումը:

Խազերով զրուած Պատարագի առանձին գոհարներ ու պատարիկներ պահպանուել են 11-12-րդ դարերի, 13-րդ դարից «Պատարագամատույց»-ներում, զրքերում եւ այլ հայ հոգեւորական անձերի ժողովածուներում:

Մեր Պատարագի միջնադարեան մեկնութիւններից առաւել ուշագրաւ ու յայտնի են Խոսրով Անձեւացու եւ Ներսէս Լամբրոնացու հեղինակածները, որը մեծ տարածում գտաւ եւ իր ժամանակ, եւ իր հետազայում, պատկանում է Յովհաննէս Արձիշեցուն: Արձիշեցին, սակայն, զրելով իր երկասիրութիւնը, նպատակ չի ունեցել տալու Պատարագի ինքնուրոյն մեկնարանութիւն, այլ օգոստովելով Անձեւացու ու Լամբրոնացու հանրայայտ մեկնութիւններից, շարադրել է դրանք աւելի համառօտ, պարզ եւ դիրքնակալ եղանակով: Մատչելիութեան պարագան պատշաճ է դարձել, որպէսզի Յովհաննէս Արձիշեցու խնդրոյ առարկայ երկը ընդօրինակուի եւ ծառայի որպէս դասազիրը հոգեւոր դպրոցների եւ հոգեւորականների համար՝ տալով նրանց Պատարագի խորիդի առաւել խորը իմացութիւն:

Աւելի ուշ, Արձիշեցու մեկնութիւնը հրատարակուել է մի քանի անգամ, մասնաւորապէս 1717 եւ 1799թ.<sup>4</sup> Կոստանդնուպոլսում, 1830թ.-ին Կալկաթայում եւ 1860թ.-ին՝ Էջմիածնում:

Յիշատակենք, որ հայ ընթեցողն արդէն մասնակիօրէն ծանօթ է Յովհաննէս Արձիշեցու «Պատարագի մեկնութեանը»: Վազգէն Ա Կաթողիկոսը «Մեր Պատարագը» աշխատութեան մէջ առաջին անգամ աշխարհաբար թարգմանութեամբ հասուածներ է վկայաբերում՝ Յովհաննէս Արձիշեցու «Պատարագի խորիուրդը» հաւատացեալ հայորդուն մատչելի դարձելու նպատակով<sup>4</sup>:

Պատմութեան խորիդից առաւել ամբողջական եւ ուշագրաւ է հիմնականում կարողիկոս Գերգ Դ Կոստանդնապոլսեցու երգածը, որի զրառմանը մասնակցել է նաև Ս. Եկմալեանը, որը հրատարակուել է 1874-ին, լրացումներով՝ 1878-ին, Վաղարշապատում՝ «Զայնազրեալ երգեցողութիւնը սրբոյ Պատարագի»: Խնչպէս յայտնի է Պատարագը բաղկացած է երեք մեծ բաժիններից՝ նախապատրաստութիւն, հաղորդութիւն, որը կազմում է կենտրոնական, կիզակետային եւ դրամատիկական կողմը: Պատարագի եւ պատարագամատուցման եւրինը դրսեւորում է երգերի միջոցով, այսինքն՝ խմբում են չորս զիսաւոր եղանակների շուրջ՝ «Սուրբ Աստուած», «Սուրբ Սուրբ», «Հայու մեր», եւ «Միայն Սուրբ»: Բացառուած չեն նաև որոշ երգերի ներկայացուածութիւնը, ինչպէս օրինակ՝ բազմաթիւ «Տեր ողորմեա»-ները:

Պատարագի եւ պատարագամատուցման ընթացքում ուշագրաւ է յատկապէս հայ միջնադարեան երգահանների վարպետութեան բարձրաբժեք արգասիքը: Ոչի եւ գեղազիտական բարձր արժանիքի շնորհի առ այսօր ընդունուած են Ս. Եկմալեանի, որը հրատարակուել է 1896թ. Լայպցիգում եւ Վիեննայում, եւ Սեծ Կոմիտասի, որը հրատարակուել է 1933թ.ին Փարիզում:

<sup>3</sup> Վազգէն Ա Կաթողիկոս «Մեր Պատարագը», Բուխարեստ -1945, Էջմիածին- 1990

<sup>4</sup> Վազգէն Ա Կաթողիկոս «Մեր Պատարագը», Բուխարեստ -1945, Էջմիածին- 1990

Ոճի եւ գեղագիտական բարձր արժանիքներով է օժտուած Թորգոն Արք. Մանուկեանի «Կոմիտասի հանձարը իր պատարազին մեջ» գիտական աշխատութիւնը, որտեղ հեղինակը մանրակրկիտ վերլուծել է հանձարեղ Կոմիտասի ստեղծագործութիւնները: «Ես կը հաւատամ, որ Կոմիտասը հանձար մըն էր,- զրու է հեղինակը,- եւ այդ փորձած եմ ապացուցանել: Ապացուցանել մի,-ստեղծագործութեամբ (ընդօնումը իմն է),- որուն վերևազիր դրել եմ «Կոմիտասի Հանձարը»: Այսուհետեւ շարունակում ե,-Կոմիտասի հանձարը կը գտնենք զիտերուն մեջ»:

Տեղինակի բազմավաստակ վերլուծութիւնը հանգեցնում է այն ամենին, որ Կոմիտասի երաժշտութիւնը հիմնականապէս հիմնում է «երեք հիմնական զիտեր»-ի վրայ: Առաջին՝ «իին հայկական խագերու իմաստը վերագտնելն է»: Երկրորդ՝ «քառալարի (թէթրագորտի) դրութիւնն է: Ըստ Կոմիտասին՝ հայ երաժշտութիւնը չի նմանիր երոպական երաժշտութեան»: Եւ նորից ընդգծում է, որ «երոպական երաժշտութիւնը ունի «մաժեռ» ձայնաշարերը, ունի դեռ ուրիշ «տայալթոնիր», «հարմոնիր», «քրոմաթիր» ձայնաշարերը»: Երրորդ զիտեր՝ «կշռոյիր դրոյեն» է:

Տեղինակը բովանդակելով Կոմիտասի Պատարազի մեջ եղած բոլոր սկզբունքները, արդարացիօրէն հանգում է այն եզրակացութեան, որ Պատարազի չորս բաժինները, ինչպէս արդէն յիշատակել ենք, որակատրել է հետեւալ կերպ: Առաջին բաժինը անուանել է «Պատրաստութիւն», երկրորդ բաժինը՝ «Ճաշու ժամ» կամ «Ռւտուղական բաժին», երրորդ բաժինը՝ «Բուն խորհուրդը Պատարազի», զոհագործութիւն», չորրորդ բաժինը՝ «Երթաւր տուն, երթանք բարով»: Պատարազում հեղինակը կարեւորում է Պատարազի կատարումը, այսինքն՝ ինչպէս ընդգծում է,- «Այդ պէտք է արտայայտենք ոչ նոյն միապաղադ դանդաղութեամբ կամ արագութեամբ, ոչ նոյն ուժգնութեամբ կամ մեղմութեամբ երգելը, եւ ոչ էլ նոյն ձայնով պոռավը ուղիղ է»<sup>5</sup>:

Անշուշտ, տրամաբանական է հեղինակի մօտեցումը, քանի որ Պատարազի հաղորդակիցը պէտք է ընկալի կատարուող «Աղօթքի» կամ «շարականի» եռթիւնը, որովհետու այդ ընթացքում ոչ թէ մարդը, աւելի ճշմարիտ ունկնդիրը ընկալում է զգայութիւնների՝ (տեսդրութեան կամ շօշափելիք) առարկայական ձեւով, տրամաբանական մտածողութեան հետեւանքի շնորհի, զուտ հաւատի եռթեամբ:

Բնականաբար, այդ կարգի պատարազամատուցումը դառնում է անձի բարոյա-հոգեբանական ներքին կոլլուրայի ձեւալորման հիմնական խթանման օղակներից մէկը:

Այսուեղ անշափ կարեւոր է Պատարազին մասնակցողի հոգեւոր կարողութիւնը: Այսինքն՝ Պատարազին մասնակցել նշանակում է հոգեւոր բաժին ունենալ կատարուած արարողութեան մեջ: Միայն այդպիսի պայմաններում հաւատացեալների մասնակցութիւնը կը դառնայ կատարեալ եւ իմաստալից:

Դրակտիկան ցոյց է տալիս, որ Պատարազի արարողութեան ժամանակ ձեւալորում է երեք կարգի մասնակիցներ՝ իսկական հաւատացեալ, որի եռթիւնը իսկական հաւատն է Աստծու եւ Քրիստոսի նկատմամբ, երկրորդ կարգի մասնակիցը աշխատում է հասկանալ ու ըմբռնել Պատարազի բուն իմաստը, իսկ երրորդ կարգի մասնակիցը՝ ուղղակի զուտ մարդկային հետաքրքրասիրութեան տեսանկիւնից: Բացառուած չէ, որ Պատարազին մասնակցեն նաև այլ հաւատի՝ ոչ քրիստոնեայ:

Անտարակոյս, Ս. Պատարազի ժամանակ անշափ կարեւորում է պատարազամատուցումը անցկացնող վճռական դերը: Այսինքն՝ Պատարազի յաջողութիւնը պասակում է նրանով: Նա պէտք է ցուցաբերի ներշնչանք, հուսորական արուեստի ձիքը, պասակում է նրանով: Նա պէտք է Պատարազի նկատմամբ հաւատը մարմատրուի մասնակիցի հոգում: Դեռ աւելին, որպէսզի Պատարազի նկատմամբ հաւատը մարմատրուի մասնակիցի հոգում: Դեռ աւելին, եթէ Պատարազի հաղորդակիցները մասնիկներ են, ապա մատուցողի դերը աւելի է դառնում

<sup>5</sup> Թորգոն Արք. Մանուկեան, «Կոմիտասի Հանձարը իր Պատարազին մեջ», Երուսաղեմ-2003թ.:

պատասխանառու, քանի որ Նրանց մասուկ հոգիները այդ Ս. Տաճարի կամարների ներքոյ առաջին անգամ շերմանում ու լուսաւորում են Աստծու լոյսով:

Անշուշտ Խման պայմաններում է ձեւաւորում կրօնա-բարոյական հոգեւոր արժեքները, որոնք հետազայում անձի ողջ կեանքի համար դառնում են լուսէ ճանապարհ:

Ըստհանրացնելով մեր առջև ծառացած խնդիրը, կարող ենք նշել, որ Պատարագները իրենց մէջ ընդգրկում են բարձր արուեստի գրական ու գեղարուեստական արժեքներ, որտեղ ընդգրկուած են՝ Ս. Եկմալեանի, Կոմիտասի, Ն. Թաշճեանի, Թ. Արք. Մանուկեանի գրառած եղանակները, որոնք մինչեւ օրս ել պահպանում են Սուրբ Էջմիածնում և Ս. Երուսաղէմում:

Անշուշտ դարերի ընթացքում Պատարագը եղել է հայ ժողովրդի պատմական կեանքի անբաժան ուղեկիցը, նրա բաղաքական ու հոգեւոր աշխարհի բարոյական հայելին: Իր հրամայականով նաև ազգային կրօնի արտացոլման անբաժան մասը: Այն կրօնի, որը նեցուկ է կանգնել ազգային բարոյական- բաղաքական ու ֆիզիկական ճակատագրի բոլոր վերելքների ու վայրէցների բոլոր ժամանակահատուածներում:

«Հայր մեր, որ երկնքում ես. Սուրբ բող լինի քո անունը. Քո թագաւորութիւնը բող գայ. Քո կամքը բող լինի երկրի վրայ, ինչպէս որ երկնքում է. Մեր հանապաօքեայ հացը տուր մեզ այսօր. Եւ ներիր մեր յանցանքները, ինչպէս որ մենք ենք ներում նրանց, որ յանցանք են գործում մեր դեմ. Եւ մի տար մեզ փորձութեան, այլ փրկիր մեզ շարից, որովհետեւ քոնք է թագաւորութիւնը եւ գօրութիւնը եւ փառքը յախտեանս. ամէն»:

### ԲԱԳՐԱՏ ՂԱՐԱԳՈՒԼԵԱՆ